ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հոկտեմբերի 2024 թվականի N 1573-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-Ի N 464-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի ապրիլի 4-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՀԻՏԵՔՍ ՊԼԱՍՏԻԿ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 464-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 2-րդ կետի «ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը» սյունակի «3902300000» թիվը փոխարինել «3902100000» թվով.

2) 2-րդ կետի «Անվանումը» սյունակի «Պոլիպրոպիլենի համապոլիմերներ» բառերը փոխարինել «Պոլիպրոպիլեն» բառով.

3) 2-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» սյունակի «Պոլիպրոպիլենի համապոլիմերներ առաջնային ձևի, Տեսքը՝ գնդիկավոր հատիկներ, Տեսակարար կշիռը՝ 0,9-0,91 գ/սմ3, Հալման հոսքի արագությունը՝ միջին 0,5-ից-70 գր/10ր.» բառերը փոխարինել «Պոլիպրոպիլեն առաջնային ձևի, Տեսքը՝ գնդիկավոր հատիկներ, Տեսակարար կշիռը՝ 0,9-0,91 գ/սմ3, Հալման հոսքի արագությունը՝ միջին 0,5-ից - 70 գր/10 ր.» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

03.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ